ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 228

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 186-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի, 219[1] հոդվածի պահանջներով, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 37-րդ հոդվածի պահանջների. **որոշում եմ.**

1. Վերին Պտղնի համայնքում՝ Նոր թաղամաս 1-ին փողոց թիվ 5 հասցեում գտնվող, 07-062-016-050 ծածկագրով իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.068763 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից 0.02615 հա գործառնական նշանակության բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի վրա արդեն իսկ գոյություն ունեցող Առևտրի սրահին կից առանց համապատասխան թույլտվության ինքնակամ հասարակական նշանակության օժանդակ շինության կառուցման համար քաղաքացի Վարդգես Հովսեփյանի նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով, որը պետք է վճարվի 90010523110 5 հաշվեհամարին :
2. Պարտավորեցնել Վարդգես Հովսեփյանին օրինականացնել ինքնակամ կառուցված շինությունը:
3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Վարդգես Հովսեփյանին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Վարդգես Հովսեփյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ղեկավարը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020թ.դեկտեմբերի 08
գ.Վերին Պտղնի